



ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՊՏՀ Կիլիխոփայության և հայոց
պատմության ամբիոնի վարիչ,
Կիլիխոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ, ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ, ԴԱՍԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ*

Մինչև 11-րդ դարը հայ ժողովրդի բացարձակ մեծամասնությունն ապրում էր պատմական հայրենիքում՝ երբեմն կորցնելով, հիմնականում պահպանելով ինքնուրույնությունն ու անկախությունը:

Մինչև թաթար-սելջուկների արշավանքը Հայաստանում ապրել է մոտ վեց միլիոն հայ (նույն ժամանակահատվածում Բրիտանական թագավորությունում՝ երկու միլիոն անգլիացի)¹, երկիրն ունեցել է անխառն էթնիկ բնակչություն, գաղթօջախներ հարևան երկրներում, Կիլիկիայում: Ջարգացել է տնտեսապես, ստեղծել բարձր մշակույթ՝ մրցելով ամենազարգացած եվրոպական երկրների հետ, շատ հարցերում առաջ ընկել և ուղղորդել նրանց: Թվում է, թե Աստծո աջն էր հայության զլխին, ոչինչ չէր սպառնում նրան բարեկեցիկ կյանք և բարձր առաջադիմություն ապահովելու համար: Բայց սկսվեցին քոչվոր ցեղերի արշավանքները, որոնց հետևանքով կորցրեց անկախ պետականությունը մայր հայրենիքում և Կիլիկիայում: Հայ ժողովուրդը նետվեց պատմական արհավիրքների հորձանուտ, որն ավարտվեց ցեղասպանությամբ, ու պարզվեց, որ հայ ժողովրդի զլխին ոչ թե Աստծո օրհնանք, այլ անեծք կար:

* 2000 թվականին «Էջմիածին» հանդեսում հրատարակվեց տողերիս հեղինակի «Հայկական հարցը և Կ. Պոլսի պատրիարքությունը 19-րդ դարի 70-ական թվականներին (Մ. Խրիմյան, Ն. Վարժապետյան)» հոդվածը: Անցած տարիների ընթացքում հրատարակվեցին նոր գրքեր, կատարվեցին նոր իմաստավորումներ, որոնք ստիպեցին նորովի անդրադառնալ այս խնդրին: Արդյունքը ընթերցողի դատին ներկայացվող այս հրապարակումն է, որը կարելի է համարել նախորդի վերամշակված, ընդլայնված և նորովի մատուցված տարբերակը:

¹ Տե՛ս **Գ. Սհարոնեան**, Մեծ երազի ճամբուն վրայ, Լոս Անճելըս, 1986, էջ 9:

Այդ ժամանակաշրջանից է սկիզբ առնում Հայկական հարցը որպես «Հայ ազատ պետականության վերականգնումը Հայոց հայրենիքի պատմական սահմաններուն մէջ»²:

Հարցը դարերի ընթացքում ձեռք է բերել նոր իմաստներ՝ դառնալով մեկ հայության ֆիզիկական գոյության, մեկ բարենորոգումների, մեկ Արևելյան հարցի բաղադրիչ և այլն*:

Եթե մինչև 19-րդ դարի 70-ական թվականները Հայկական հարցը դիտվում է որպես հայրենիքում անկախ պետականության վերականգնում, ապա 1870-ից այն համարվում է արևմտահայության խնդրի լուծում եվրոպական դի-վանագիտության միջնորդությամբ և ազդեցությամբ: Այդ ժամանակահատվածում հարցն առաջադրողը Կ. Պոլսի պատրիարքությունն էր, ընթացք տվողները՝ Մ. Խրիմյան և Ն. Վարժապետյան պատրիարքները:

Կ. Պոլսի պատրիարքությունը ստեղծել է 1460 (1461) թվականին սուլթան Սուլեյման 2-րդը: Քանի որ Թուրքիան կառուցված էր համայնքների (միլեթ) սկզբունքով, այսինքն՝ ազգերն ընդունվել են իրենց դավանանքով, այդ պատճառով պատրիարքությունն սկզբից ևեթ ձեռք է բերել որոշակի արտոնություններ և դարձել Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի կրոնական բարձրագույն հիմնարկությունը, նրանց ներքին գործերը կարգավորող հաստատությունը**։ Պատրիարքները լուծել են ոչ միայն կրոնական, այլև սոցիալ-տնտեսական, ընկերային հարցեր: Պատրիարքը ազգային շահերի արտահայտիչը, ղեկավարն ու պատասխանատուն էր: Նրա կայացրած որոշումները պարտադիր էին, անհրաժեշտության դեպքում դիմում էին պետական ուժի օգնությանը: Պատրիարքները թրքական կառավարության նկատմամբ վարել են խիստ զգուշավոր՝ «հավատարիմ հպատակի» քաղաքականություն, որով ցանկացել են ազգի համար ստեղծել գոյության տանելի պայմաններ, իսկ հնարավորության դեպքում՝ ձեռք բերել առանձնաշնորհումներ:

Պատրիարքության ներքին ինքնուրույնությունը, ազգային-վարչական կենտրոնին բնորոշ գործառնությունների իրականացումը և դրանց հետ կապված ազգային-քաղաքական հույսերը հիմք հանդիսացան կանոնադրության մշակման (Գր. Օտյան, Ն. Ռուսինյան, Սերվիչեն (Ս. Վեչինյան) և մի քանի այլ մտավորականներ), որը պատրիարքը հաստատեց 1860 թ. մայիսի 24-ին, իսկ թուրքական կառավարությունը՝ 1863 թ. մարտի 17-ին: Նահապետ Ռուսինյանի առաջարկությամբ կանոնադրությունն անվանվեց Ազգային սահմանադրություն, որով էլ պատրիարքի զլխավորությամբ առաջնորդվել են արևմտահայերը մինչև 1915 թ.՝ որոշ ընդհատումներով:

² Նույն տեղում, էջ 8:

* Արևելյան հարցը ծագել է 18-րդ դարում և դիտվել որպես քայքայվող Օսմանյան կայսրության տարածքների տիրապետման հարց: Հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է Սրբազան դաշինքի Վերոնի համաժողովում: Արևելյան հարցն անցել է երեք փուլով. ա) 18-րդ դարի վերջ-19-րդի կեսեր, գլխավորը Հունաստանին անկախություն տալու հարցն էր, որն ավարտվում է այդ երկրի անկախության հաստատմամբ, բ) մինչև Բեռլինի վեհաժողով, որն ավարտվում է Լիբանանին ինքնավարություն, Բուլղարիային անկախություն տալով, գ) Բեռլինի վեհաժողովից մինչև Լոզանի կոնֆերանս (1923 թ.), գլխավորը Հայկական հարցն էր. ավարտվում է արևմտահայերի ցեղասպանությամբ (տե՛ս Ստ. Պողոսյան, Հայոց ցեղասպանության պատմություն, հ.1, Եր., 2008, էջ 65):

** Կաթոլիկության ու բողոքականության ներթափանցման հետևանքով և եվրոպացիների խորհրդով սուլթանը 1830 թ. հաստատում է հայ կաթոլիկ հասարակության, իսկ 1847 թ.՝ հայ բողոքական հասարակության ինքնուրույն գոյության իրավունքը:

Մինչև 1869 թ. սեպտեմբերի 4-ին Մկրտիչ Խրիմյանի պատրիարք ընտրվելը արևմտահայությանը ներկայացրել, նրա անունից խոսել և գործել է Կ. Պոլսի մտավորականությունը, որից հետո՝ հիմնականում պատրիարքարանը:

Գավառներից եկող բողոքներով զբաղվել են բոլոր պատրիարքները, առավել կարևորները ներկայացրել են Բ. Դուռ: Բողոքարկումն արվել է հետևյալ կերպ. Բ.Դուռը, ստանալով պատրիարքի ուղարկած տեղեկագիրը, հրամանագիր է ուղարկել անօրինականություններ, չարաշահումներ թույլ տված նահանգի կուսակալին, կուսակալը հրահանգել է սանջակի պետին, վերջինս՝ գազայի պետին կամ գյուղապետին: Կատարվածի մասին տեղում պատրաստվել է համապատասխան տեղեկանք-արձանագրություն (ստորագրել են նաև հայերը՝ վախի ազդեցությամբ կամ ակնկալիքով), որը հակառակ հերթականությամբ հասել է Բ. Դուռ՝ առանց որևէ գործնական արդյունքի: Հարստահարությունը, հանցագործությունները շարունակվել են, կատարողները հայտնի են եղել, բայց ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել: Մ. Խրիմյանը փոխել է բողոքարկման մեթոդաբանությունը և որոշել Բ. Դուռ ներկայացնել ոչ թե հարստահարության, անարդարության առանձին դեպքեր, այլ արևմտահայության վիճակի ընդհանուր պատկերը: Այդ նպատակով 1870 թ. Ներսես Վարժապետյանի գլխավորությամբ ստեղծել է «Հարստահարութեանց քննիչ հանձնաժողով», որը, 10 ամիս տեղերում ուսումնասիրություններ կատարելուց հետո, գավառահայության մասին 1871 թ. ներկայացրել է տեղեկագիր, որում արձանագրվել են.

- ա) պետական տուրքերի գանձման մեջ թույլ տրված անկարգությունները,
- բ) կառավարական պաշտոնյաների զեղծումները,
- գ) դատարանների կողմից քրիստոնյաների վկայությունների մերժումը,
- դ) զանազան անձանց հարստահարությունները:

Տեղեկագրից բացի, արվել են նաև գործնական առաջարկություններ, մասնավորապես.

- ա) քրիստոնյաներից զինվորական տուրքի փոխարեն զինվորական ծառայություն պահանջել, ինչպես նախատեսված է թանգիմաթով,
- բ) տուրքերի գանձումը կատարել Ազգային վարչության միջոցով,
- գ) կենտրոնական իշխանության կողմից քննիչ նարմին ուղարկել գավառներ՝ տեղերում պարզելու իրական պատկերը,
- դ) դատական խնդիրները քննել ոչ թե կրոնական, այլ քաղաքացիական օրենքներով,
- ե) քրդերի, չերքեզների և այլ թափառաշրջիկ ցեղերի կողմից զենքի օգտագործումն արգելել կամ ինքնապաշտպանության նպատակով խաղաղ բնակչությանը զենք օգտագործելու իրավունք տալ:

Տեղեկագրում նշվում է նաև, որ Դրիմի պատերազմից մինչև 1870 թ. Բ. Դուռ է ներկայացվել 527 թագիր, որոնցից ոչ մեկը լուծում չի ստացել: Հենց 1870 թ. տեղեկագրով է, ըստ Ստ. Պողոսյանի, Հայկական հարցը դառնում «սեփական հայրենիքում անվտանգ հարատևելու պահանջ»³:

Տեղեկագիրը լրջորեն ուսումնասիրվում, բայց արժանանում է նախորդների ճակատագրին: Այսուհանդերձ, Մ. Խրիմյանի ներկայացրած տեղեկա-

³ Ստ. Պողոսյան, նշվ. աշխ., հ.1, էջ 154:

գիրը պատմական արժեք ունի, որովհետև արտացոլում է հայության ընդհանուր վիճակը և արևմտահայության իրական պատկերը:

Փաստենք մի շատ կարևոր հանգամանք. պատրիարքները, այդ թվում և Մ. Խրիմյանը, գավառահայության հարցը քննարկել են միայն տնտեսական-ընկերային տեսանկյունից, որի լուծումը կապել են թրքական կառավարության հետ՝ դա համարելով նաև իրենց կառավարությունը, այսինքն՝ խնդիրը դիտել են որպես Թուրքիայի ներքին հարց: Նույն մոտեցմամբ է հարցին անդրադարձել նաև կառավարությունը և հայերի բողոքների մեջ քաղաքական դիտավորություն չի տեսել: Կ.Պոլսի հայ ամիրայական դասը, մտավորականության և բարձրաստիճան հոգևորականության զգալի մասը թրքական պետությունը նաև իր պետությունն է համարել և նրանից է ակնկալել իր հարցերի լուծումը: Այսպես օրինակ՝ դեռևս 1862 թվականին Արմենակ Հայկունին գրում է. «Գիտէ՛ նա (թրքական կառավարությունը.- Ա.Ս.) թէ Հայ Ազգը իւր ամենահաւատարիմ հպատակն է.... Հայը ինչպէս որ հինգ դարերէ հետէ հաւատարմութեամբ ծառայած է Իրեն Երախտագիտաբար, նոյնպէս ալ ասկից վերջը պիտի շարունակէ իւր ընթացքը ինչպէս որ օրինաւորէ եւ վայելուչ, իւր կողմանէ միշտ վստահ լինելով թէ իւր Տէրը կը սիրէ զինքը եւ միշտ պատրաստէ շնորհել իրեն որ եւ իցէ արտօնութիւն մը որ արժան եւ կարելոր է իւր ներքին եւ արտաքին կացութեան բարեկարգութեանը եւ յառաջադիմութեանը համար»⁴:

Գրեթե նույնն է ասում Ե. Տեմիրճիպաշյանը 1883-ին. «Հայք՝ Օսմանեան պետութենէն ուրիշ պետութեան մը ներքեւ՝ չէին կրնար աւելի խղճի եւ մտաց ազատութիւն վայելել, եւ թէ կը հաւատան Հայք՝ երկրի բոլոր բնակչաց հետ՝ կատարեալ բարօրութիւն վայելել ընդհուպ բարենորոգմանց անխափան գործածութեամբ»⁵:

Համեմատելով թաթար-սելջուկյան, մոնղոլական, պարսկական և նույնիսկ ռուսական տիրապետության հետ՝ արևմտահայ մտավորականների մի մասը թրքական գերիշխանությունը համարել է նվազագույն չարիք: Ահա թե ինչու, հավանաբար, դիվանագիտություն չէր բանեցնում Մ. Խրիմյանը, երբ ասում էր. «Ես Տէրութեան եւ Ազգին շահերը իրարմէ տարբեր չեմ ճանչնար»⁶:

1875 թ. Օսմանյան պետության դեմ ապստամբեց Հերցեգովինայի և Բոսնիայի քրիստոնյա բնակչությունը: 1876 թ. Սերբիան պատերազմ հայտարարեց սուլթանին՝ ի պաշտպանություն ապստամբների: Պատերազմին մասնակցեց Չեռնոգորիան: Նույն թվականին ապստամբեց Բուլղարիան: Փաստորեն, Օսմանյան կայսրության դեմ պայքարի դուրս եկան հայերին բախտակից ազգերը: Այս պայմաններում Խրիմյանին հաջորդած (Խրիմյանը պատրիարքությունից հրաժարվում է 1873 թ. օգոստոսի 3-ին) Ներսես պատրիարքը հանդես եկավ հատուկ շրջաբերականով, որում մասնավորապես նշում է. «Այն օրէն ի վեր որ Հայոց ազգին ամենամեծ մասն Օսմանեան հզօր Տէրութեան հպատակասէր քաղցր հովանւոյն ներքեւ մտաւ, իւր հինգ դարուց պատմութիւնը կը ցուցանէ, թէ ի՞նչ շնորհներ իրեն պարգեւած է այս հզօր Տէրութիւնը: Եթէ այսօր Թուրքիոյ մէջ կը տեսնենք Հայ ազգը՝ որ կը պահէ իւր

⁴ Ա. Հայկունի, Հայ ազգ եւ Սահմանադրութիւն, «Ծաղիկ», 1862, թիվ 35, էջ 289-290:

⁵ Ե. Տեմիրճիպաշեան, Ժամանակակից պատմութիւն // Գրական եւ իմաստասիրական շարժում, 1883, տետր Բ, էջ 40:

⁶ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860 - 1870, էջ 414:

Կրօնը, իւր Եկեղեցին, իւր Լեզուն, իւր Պատմութիւնն ու ամանդութիւնները, վերջապէս եթէ այսօր Հայ ազգն կը զգայ իւր էութիւնը, նոյն բարեխնամ Տէրութեան շնորհաց արդիւնքն են... Հայոց ազգն ալ իւր այս վայելած շնորհներուն փոխարէն հաւատարիմ հպատակութիւն ցուցած է արդեամբ, եւ յարատեւ երախտագիտութիւն իւր սրտին մէջ կրած է յորդուց յորդիս:

Ինչ ասպարէզ որ բացուած է իր առջեւ, հոն բերած արգասաւորած է իւր բոլոր մտաւորական, բարոյական եւ նիւթական կարողութիւնները եւ ապացուցած է այսու՝ թէ Օսմանեան Պետութեան ամենակարեւոր տարրն է... Ստոյգ է թէ եւ որ Հայ ազգը մէրթ ընդ մէրթ գաւառներու մէջ բարեխնամ Տէրութեան կամաց հակառակ հարստահարութեանց ենթակայ եղած ալ է, հարստահարութիւնք՝ որոնք միայն մարմինը կը վնասեն եւ հեռի են այն տեսակ հարստահարութիւններէն՝ որոնք ոգին եւ մարմինը միանգամայն կը վնասեն եւ ազգային գոյութեանը կը սպառնան... Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է. նոյն իսկ Հայուն Կրօնը, Պարոզը, ինչքը, տունը, ընտանիքը եւ պատիւնն ու կեանքը պաշտպանել ըսել է»⁷:

Այնքան մեծ էր այդ շրջաբերականի բացասական ազդեցութիւնը, որ Գրիգոր Արծրունին բնութագրեց որպէս «խայտառակ և ամօթալի»⁸:

Այս շրջաբերականում հստակ երևում է երկու հանգամանք.

ա) թրքահպատակութիւնը նախընտրելի է համարվել ռուսահպատակութիւնից, որովհետեւ, ըստ պատրիարքի, Թուրքիայում հարստահարութիւնները վնասում են միայն մարմինը, իսկ ոգին առողջ պահելու դեպքում վտանգը մեծ չէ, և ազգը կարող է գոյատևել, մինչդեռ Ռուսաստանը ոգուն է խփում, ինչը մեծացնում է ազգի ծուլման վտանգը:

բ) Ներսեսը և նրա շրջապատը համոզված էին, որ հայերը Օսմանյան կայսրության ամենակարևոր տարրն են: Թուրքիայի համար հայ տարրի կարևորության հավատն այնքան խորն էր պոլսահայ շրջանակներում, որ արմատախիլ չեղավ նույնիսկ եղեռնից հետո: Ահա թե ինչ է գրում Մաղաքիա Օրմանյանը եղեռնից հետո. «Հայը Թուրքիոյ անհրաժեշտ տարրն է... Թուրքիոյ գաւառները շէնցնողը, հողը մշակողը, արհեստներուն հետեւողը, առեւտուրը ապահովողը հայն է... Հայը Թուրքիայէն պակսեցնողը Թուրքիոյ ոխերիմ թշնամին եղած կ'ըլլայ... Թուրքիոյ կայսրութեան շինուածին քարը թուրքն է, շաղախը հայն է ...»⁹:

Այդպիսին էր Կ. Պոլսի հայ ամիրայական դասի, պատրիարքարանի, մտավորականության մի զգալի մասի վերաբերմունքը Օսմանյան կայսրության նկատմամբ: Այդպիսին չէր բուն հայրենիքում ապրող հայության վերաբերմունքը: Այնտեղ իշխողը ռուսասիրությունն էր:

Երբ գավառներից Կ. Պոլիս լուրեր հասան նահանջող թրքական բանակի և քրդական հրոսակների կողմից հայկական գյուղերում կատարված բարբարոսությունների մասին, Կ. Պոլսի հայության տրամադրությունները փոխվեցին նույնպես: 1877 թ. հունիսի 14-ին թրքական պառլամենտի նիստերից մեկում հայ պատգամավորները, առանց վախի, իրենց գայրույթն են արտահայտում կատարված դեպքերի կապակցությամբ: Պատգամավոր Պալլարյանն իր ելույթում ասում է, որ երբ ինքը հարցնում է կուսակալներին, թե ինչն է չեն պատժում քրդերին, իրեն պատասխանում են՝ այս գործում «հիքմեթը

⁷ Ներսէս Պատրիարքի շրջաբերականը, «Մշակ», 1876, թիվ 33, էջ 3:

⁸ Նոյն տեղում, էջ 1:

⁹ Մ. Օրմանեան, Խոհք եւ խօսք, Երուսաղեմ, 1929, էջ 337-338:

հիւքիւմեթ կայ (վերապահեալ պետական գաղտնիք)»¹⁰: Այդ գաղտնիքի իմաստը հետևյալն է. կառավարությունը քրդերին զինում է, որպեսզի նրանք Հայաստանում ապրող հայերին զսպեն ապստամբության դեպքում: Պառլամենտում հայերի պաշտպանությամբ հանդես են գալիս հույն և նույնիսկ մահմեդական պատգամավորներ և Բ. Դռնից պահանջում ազդու միջոցներ գործադրել բռնությունների դեմն ամենելու համար: Սա Հայկական խնդրի առաջին հրապարակային քննությունն էր թրքական պաշտոնական շրջաններում, ինչը դուր չեկավ կառավարությանը, իսկ սուլթանը ցրեց խորհրդարանը: Այս ընթացքում Վանում տեղի ունեցած դեպքերը (հրդեհ, ջարդեր և թալան) ճնշող տպավորություն թողեցին մայրաքաղաքի հայության և եվրոպական դեսպանատների վրա: Ստեղծված մթնոլորտը մեղմելու նպատակով սուլթանը 1877 թվականի օգոստոսի 10-ին հանդիպում է կազմակերպում պատրիարքի հետ: Սուլթանը պատրիարքին նվիրում է Օսմանիե շքանշան, իսկ վերջինս, դիմելով սուլթանին, ասում է. «Երանի թէ այսպիսի բարի եւ հազազիւտ եւ հրեշտականման թագաւորի մը արժանաւոր հպատակն ըլլայինք»¹¹:

Տեղի ունեցած իրադարձությունները չփոխեցին Ներսես Վարժապետյանի կարծիքը. նա շարունակում էր մնալ այն համոզմանը, թե պետք չէ գործել Թուրքիայի դեմ և դիմել օտար տերություններին, հարկ է թրքական կառավարության միջոցով ձեռք բերել այն առանձնաշնորհումները, որոնք անհրաժեշտ են Հայաստանին: Բայց քանի որ թրքական կառավարությունն այլևս հավատ չէր ներշնչում, պատրիարքը կորցնում էր ժողովրդի համակրությունը: Ներսեսի որդեգրած քաղաքականությանը դեմ էր նաև բարձրաստիճան հոգևորականների մեծ մասը: Նրանք Ներսեսից պահանջում էին փոխել քաղաքականությունը, դիմել օտար տերություններին: Բայց, ըստ Ազգային սահմանադրության, ազգային գործերի դեկը պատրիարքի ձեռքին էր. նա Ազգային վարչության պետն էր, Ազգային ժողովի նախագահը: Հետևաբար՝ Ներսեսին պետք էր պարտադրել փոխել քաղաքականությունը: Պատմական այս պահին դարձյալ ասպարեզ է գալիս Մ. Խրիմյանը: Նա պատրիարքությունից հրաժարվելուց հետո ապրում էր Բոսֆորի ափին գտնվող Կուստունջուք (ըստ Է. Կոստանյանի՝ Գուզկունճուք) փոքրիկ գյուղում և զբաղվում գրականությամբ: 1877 թ. նոյեմբերյան մի օր Կուստունջուքի իր բնակարանում Մ. Խրիմյանը հրավիրում է եպիսկոպոսներին և առաջարկում տապալել Ներսեսին և նոր քաղաքական կուրս որդեգրած մարդու առաջադրել պատրիարք: Բայց, մինչ այդ, որոշում են հանդիպել Ներսեսին և համոզել նրան՝ փոխելու քաղաքականությունը: Պատվիրակությունը հանդիպում է Ներսեսին և համոզում նրան: Ներսեսը հայտարարում է՝ որտեղ ազգի շահն է, այնտեղ էլ ինքն է, պարզապես պահանջում է միաբանություն¹²:

Այսպես է տեղի ունենում Ներսեսի շրջադարձը, որին նպաստում են նաև արտաքին քաղաքական հանգամանքները: Ներսեսի նոր գծի որդեգրումը ձեռնտու էր և՛ Թուրքիային, և՛ Անգլիային: Բանն այն է, որ ռուս-թուրքական պատերազմում Թուրքիան պարտվել էր: Արևմտյան Հայաստանի տարածքների մեծ մասը գտնվում էր ռուսական զորքերի հսկողության տակ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Թուրքիան և Անգլիան ցանկանում էին Ռուսաս-

¹⁰ Մեջբերումն ըստ՝ Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 192:

¹¹ Նույն տեղում, էջ 205:

¹² Տես Սարուխան, նշվ. աշխ., հ. Բ, Թիֆլիս, 1912, էջ 266:

տանի գրաված տարածքներում հայերի միջոցով ստեղծել մի «արգելակ պետություն» Թուրքիայի հովանու ներքո և դրանով իսկ ռուսական առաջխաղացման դեմն առնել:

Պատերազմի ընթացքում էլ Հայկական հարցը սոցիալ-տնտեսականից աստիճանաբար փոխարկվում է ազգային-քաղաքականի:

1878 թ. հունվարի 19-ին (31-ին) կնքվում է Ադրիանապոլսի զինադադարի պայմանագիրը, որում ակնարկ իսկ չկար հայերի մասին. կարծես թրքական տիրապետության տակ տառապող այդպիսի ազգ գոյություն չուներ: Օգտվելով այն հանգամանքից, որ Ազգային ժողովը ազատ գործելու հնարավորություն էր տվել Ներսես պատրիարքին, նա որոշում է դիմել ռուսական կառավարությանը: Պատրիարքը ստեղծում է գաղտնի պատգամավորական խումբ, որը հանդիպելու էր ռուսական ներկայացուցիչներին, իսկ մինչ այդ, 1878 թ. փետրվարին, նման հանդիպում արդեն ունեցել էր Ադրիանապոլսի առաջնորդ (առաջնորդական փոխսանորդ) Գևորգ Ռուսճուգուլյանը: Ողջունելով Իգնատևին և ռուսների կողմից Հայկական հարցի լուծման հույս հայտնելով՝ նա լսում է Իգնատևի հետևյալ պատասխանը. «...բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասը պիտի չկարողանայ գտնել առ այժմ այն ազատութիւնը, զոր ունեցած են պուլղարք, *վասնզի հայք անպատրաստ գտնուեցան եւ Հայաստանի մէջ դարձած են մեռեալ տարերք...* Բայց մի վիատիք, կը յուսադրեմ զձեզ: Քանի որ Թիւրքիոյ հպատակ էք, ապագայի յուսով, *այս վայրկեանես սկսեցէք պատրաստ լինիլ*. պատրաստ՝ դաստիարակութեամբ, ուսմամբ եւ քաղաքագիտութեամբ, պատրաստ՝ նիւթապէս եւ բարոյապէս, պատրաստ՝ ներքին կազմակերպութեամբ... Պատրաստ եղիք այն օրուան համար, յորում քաղաքականութիւնը պիտի առաջնորդէ զձեզ յազատութիւն, եւ ես պատրաստ եմ միշտ օգնել ձեզ: Պատրիարքնիդ թող ժամավաճառ չլինի, թող սկսէ գործելու, ժամ է»¹³:

Ռուսճուգուլյանը տեսակցության արդյունքների մասին Ներսեսին հայտնում է հունվարի 20-ին: Պատրիարքը սկսում է գործել: Նա 1878 թ. փետրվարի 25-ին սուլթանի գիտությամբ հանդիպում է ռուսական բանակի ղեկավարության հետ և առաջարկում հայերին տալ այն, ինչ տրվելու էր մյուսներին: Իսկ հայերի ցանկացածը ինքնավարությունն էր Լիբանանի օրինակով¹⁴: Բայց արդյունքում ունեցանք Սան Ստեֆանոյի պայմանագրի (1878 թ. փետրվարի 19 (մարտի 3)) 16-րդ հոդվածը, որում նշված է. «Նկատի ունենալով, որ ռուսական զորքերի կողմից Հայաստանում գրավված վայրերի մաքրումը, որոնք պետք է վերադարձվեն Թուրքիային, կարող է այնտեղ ընդհարումների և բարդությունների առիթ տալ, որոնք կարող են վնասակար անդրադառնալ երկու պետությունների բարեկամական հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է անհապաղ իրագործել բարվորումներ և բարենորոգումներ, որոնք կծագեն հայաբնակ գավառների տեղական պահանջներից ու ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:

Սան Ստեֆանոյի պայմանագրով Հայկական հարցը Թուրքիայի ներքին հարց լինելուց փոխարկվում է Ռուսական հարցի, բայց և «...միջազգային

¹³ Մեջբերումն ըստ՝ Սարուխան, նշվ. աշխ., հ.Բ, էջ 270-271:

¹⁴ Տե՛ս Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Եր., 2010, էջ 435:

^{*} 16-րդ հոդվածը քիչ այլ խմբագրությամբ տես Հայոց պատմություն, ԵՊՀ, 2012, էջ 349:

առաջին դիվանագիտության սուբյեկտի»¹⁵: Այնուհետև, 16-րդ հոդվածով, Հայկական հարցը ոչ միայն բռնում է միջազգայնացման ուղին, այլև Բ. Ղուռը հրապարակայնորեն ճանաչում է Հայաստանի և հայ ազգի գոյությունը Ասիական Թուրքիայում¹⁶:

16-րդ հոդվածից հայերը դժգոհ մնացին, որովհետև չստացան ինքնուրույնություն, բայց գոհունակություն էլ կար, որովհետև, ինչպես Խորեն Նար-Պեյն (Խորեն Գալֆայան) էր Գևորգ կաթողիկոսին գրում.

- ա) Հայաստան անունը պաշտոնապես ընկալելի դարձավ Օսմանյան կայսրության համար,
- բ) խոստացան և երաշխավորեցին ամբողջական բարեկարգություններ կատարել Հայաստանում,
- գ) հնարավորություն ստեղծվեց ռուսական պետությանը դիմելու միջոցով ստիպել Բ. Ղռանը՝ իրականացնելու 16-րդ հոդվածի պահանջները¹⁷: Այդ նույն հոդվածի հետ կապված՝ Ներսես պատրիարքը Ազգային ժողովում ասում է. «Հիմա տիարք պատվականք, ալ մոռացուած չենք, ալ այն անհանդուրժելի սոսկալի մոռացումը վերացավ: Հիմա «Հայ ենք» ըսելու սկսան չամչնալ անոնք՝ որ կամչնային երբեմն»¹⁸:

Երբ պարզ դարձավ, որ մեկ ուրիշ վեհաժողովում վերաքննվելու է Սան Ստեֆանոյի պայմանագիրը, պատրիարքն ակտիվ գործունեություն սկսեց, որպեսզի ոչ միայն պահպանվի 16-րդ հոդվածը, այլև ավելի մեծ նվաճումներ ձեռք բերի՝ ի նպաստ հայ ժողովրդի: Սկսեց Բեռլինի վեհաժողովը (1878 թ. հունիսի 1-ից (13-ից) հուլիսի 1-ը (13-ը)), որի հետ մեծ հույսեր էին կապում հայերը և Ներսես պատրիարքը: Եվրոպական տարբեր երկրներ մեկնած հայ պատվիրակները վերադարձան Բեռլին և վեհաժողովի մասնակիցներին ներկայացրին փաստաթղթեր, որոնցից էին՝ «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի», «Վիճակագիր Օսմանյան Հայաստանի», որին կցված էր ապագա ինքնավար Հայաստանի քարտեզը (Էրզրումի և Վանի վիլայեթները, Ղիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Սղերդի սանջակի հյուսիսային մասը, Տրապիզոնի ու Բաթումի միջև գտնվող Ռիզե նավահանգիստը, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում), ինչպես նաև Նուբար Փաշայի «Մեկ քանի նոթեր Հայաստանի վարչության մեջ մտցվելիք բարենորոգումների մասին»:

Պատգամավորների պահանջով Ներսես պատրիարքն իր կատարած աշխատանքների մասին հաղորդում է ներկայացնում Ազգային ժողովին, ըստ որի. «Հայոց խնդիրը իր արժանաւոր կերպովը ներկայացած է թէ՛ Բ. Ղռան եւ թէ՛ եւրոպական տերութեանց: Բ. Ղուռն իր պաշտպանութիւնը խոստացաւ, եւրոպական տէրութիւնք ամենքն ալ իրենց յամակրութիւնը յայտնեցին եւ ամենքէն ալ խօսք առած են, որ դեսպանաժողովին մէջ նկատողութեան պիտի առնուի մեր ազգին վիճակն ալ. Հասարակաց կարծիքն ալ, այսօր Եւրոպայի մէջ ոչ եւս անտարբեր է մեզի համար»¹⁹:

Հաղորդումն այնքան է ոգևորում, որ Իզմիրլյանն իր ընկերների անունից ջերմ շնորհակալություն է հայտնում պատրիարքին, որ «աննկուն արիու-

¹⁵ Գ. Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առձակատումներում (XVI դարից մինչև 1917 թ.), Եր., 2004, էջ 266:

¹⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Եր., 1981, էջ 111:

¹⁷ Տե՛ս Սարուխան, նշվ. աշխ., էջ 292:

¹⁸ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1877-1879, 2-ը յունիսի 1878, էջ 4:

¹⁹ Նույն տեղում, էջ 8:

թեամբ աշխատած է եւ կ'աշխատի ազգին խնդրոյն համար»²⁰: Իզմիրյանից սկսած՝ բոլոր պատգամավորները «յուզեալ սրտի» համբուրում են Ներսեսի աջը:

Պատմաբանների միջավայրում այն տեսակետն է շրջանառւում, թէ պատրիարքը գործել է Աբդուլ Համիդի գիտությամբ, երբեմն՝ անմիջական ցուցումներով և ուղղորդմամբ: Սուլթանը մոլորության մեջ է գցել Բ. Դեանն աշխատող հայ բարձրաստիճան գործիչներին, իսկ նրանք՝ պատրիարքին: Սուլթանը Սան Ստեֆանոյի նախօրէին Ներսեսին հասկացրել է, որ նա կարող է դիմել ռուսներին՝ արևմտահայությանը թուրքական իշխանության ներքո ինքնավարություն տալու խնդրանքով, որն, ըստ Աբդուլ Համիդի ծրագրերի, պիտի ստիպեր ռուսներին դադարեցնել առաջխաղացումը և զորքերը հանել գրավյալ տարածքներից: Իսկ երբ պարզ է դարձել, որ նոր դեսպանաժողով է հրավիրվելու Բեռլինում, Ներսեսին խորհուրդ է տվել հայկական ինքնավարության պահանջով պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ նպատակ ունենալով խոչընդոտելու Բուլղարիային տրվելիք անկախությունը²¹: Նույնիսկ նշվում է, որ վեհաժողովին ներկայացվելիք Հայաստանի ինքնավարության ծրագրերը ընթերցել և հավանություն է տվել անձամբ Աբդուլ Համիդ II-ը²²: Այդ պատճառով պատերազմի սկզբից մինչև Բեռլին թուրքերը սիրաշահել են հայերին, որպեսզի.

ա) հայերը չաջակցեն ռուսներին (պատերազմական գործողությունների ընթացքում),

բ) «Արգելակ պետություն» ստեղծելու միջոցով գրավյալ տարածքներն ազատեն ռուսական զորքերից,

գ) Բեռլինում հայերի միջոցով իրականացնեն Թուրքիայի ծրագրերը²³:

Ցավոք, իրադարձություններն ընթանում են Թուրքիայի և Անգլիայի նախանշած ծրագրով՝ ի վնաս հայերի: 1878 թ. մայիսի 30-ին Շուվալովն ու Սուլթերին կնքում են համաձայնագիր, որում «Հայաստան» բառը հանվում է հայերին վերաբերող հատվածից:

1878 թ. մայիսի 25-ին (հունիսի 4) պայմանագիր է կնքվում Սևֆետ փաշայի և Լեյարդի միջև: Պայմանագիրն անվանվում է «Պաշտպանողական դաշնակցություն Անգլիայի և Թուրքիայի միջև», որով Կիպրոսն անցնում է Անգլիային: Անգլիան ամբողջությամբ իրականացնում է իր շահերից բխող թուրքամետ քաղաքականություն, մինչդեռ հայերն իրենց իղծերի իրականացումը կապում էին անգլիական պատվիրակության հետ: Եվրոպական ոչ մի պատվիրակություն (իսկ Բեռլինի վեհաժողովին մասնակցում էին Անգլիան, Ռուսաստանը, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ավստրո-Հունգարիան) իր վրա չի վերցնում Հայկական հարցը ներկայացնելու խնդիրը: Հայերն ստիպված դիմում են թուրքական պատվիրակության ղեկավար Կարաթեոդոր (ըստ Ստ.Պողոսյանի՝ Կարաթադոր, Կարադաթոր) փաշայի օգնությանը: Վերջինս նոր էր Սուլթերիի հետ ձևակերպել 61-րդ հոդվածը, այսինքն՝ գիտեր, որ Հայկական հարցը չի լուծվելու, և հայերը Բեռլինում այլևս անելիք չունեն, ուստի մերժում է խնդրանքը, միաժամանակ հեռագրում Կ.Պոլիս, որպեսզի պահանջեն Խրիմյանի պատվիրակության վերադարձը:

²⁰ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1877-1879, 2-ը յունվարի, 1878, էջ 9:

²¹ Տե՛ս Հայոց պատմություն, նշվ. հրատ., հ. 3, գիրք 1, էջ 433: Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 186:

²² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 113:

²³ Տե՛ս Ստ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 178-179, 185: Գ. Գալոյան, Հայերը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առձակատումներում (XVI դարից մինչև 1917 թ.), էջ 290:

Պատճառաբանելով, որ պատվիրակությունը Ազգային ժողովն է ընտրել, և ինքը նման լիազորություն չունի, Ներսես պատրիարքը մերժում է պատվիրակությունը հետ կանչելու պահանջը: Ներսեսի արարքը արժանանում է Գրիգոր Արծրունու հիացմունքին, և նա գրում է. «Թուրքիայի հայոց հոգեւորականութիւնը արժանի է դառնում ամբողջ ազգի խորին համակրութեանը... Այժմ մենք չենք կարող չը յայտնել նրան (Ներսեսին.- Ա.Ս.) մեր կատարեալ համակրութիւնը, մեր յարգանքը, երբ նա իր քաջ վարմունքով, իր վեհանձն պատասխանով կրկին յարուցանում է հայ մարդու հոգու մեջ հինգերորդ դարի հայոց հոգեւորականութեան յիշատակը: Աշխարհը կը յարգէ հայերին միայն այն ժամանակ, երբ ամենքը կը տեսնեն, որ հայը իր կեանքի գնով պաշտպանում է իր անձը, իր պատիւը, իր ազգի իրաւունքները»²⁴:

Բեռլինի վեհաժողովում է ծնվում 61-րդ հոդվածը, որով Հայկական հարցը դառնում է միջազգային, իսկ դարձնողը, ըստ էության, Կ.Պոլսի պատրիարքությունն էր՝ Ներսես պատրիարքի գլխավորությամբ: Հայկական հարցը դարձավ միջազգային, որովհետև.

ա) հայերն իրենց ուժերով չկարողացան լուծել այն,

բ) թուրքերը չցանկացան լուծել,

գ) հայերը ստիպված դիմեցին եվրոպական պետությունների օգնությանը:

61-րդ հոդվածում նշվում է. «Բարձրագոյն Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման հայաբնակ շրջաններում իրագործել տեղական կարիքներից ելնող բարվոքումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին Բարձրագոյն Դուռը պարբերաբար պետք է հաղորդի տերություններին, որոնք կհետևեն դրանց իրագործմանը»: Այս ձևակերպմամբ՝ վեհաժողովին մասնակից պետությունների կողմից մերժվում է Օսմանյան կայսրության կազմում Հայաստան երկրի գոյությունը: Պատվիրակությունն իր բողոքն է հայտնում ու վերադառնում Կ.Պոլիս: Բողոքում նշվում է. «Հայկական պատվիրակությունը ստիպված է իր ափսոսանքը արտահայտել այն բանի համար, որ կոնգրեսը չընդունեց իր որքան օրինական, նույնքան էլ չափավոր պահանջները: Մենք կարծում էինք, թե մի քանի միլիոն մարդուց կազմված մի ժողովրդի, որը մինչև օրս թույլ չի տվել, որ իրեն օգտագործեն որպես արտասահմանյան քաղաքականության գործիք, չնայած շատ ավելի է շահագործվել, քան Թուրքիայի մնացած քրիստոնյա ժողովուրդները, մի ժողովրդի, որը ոչ մի դժվարություն չի պատճառել թուրքական կառավարությանը... մի ժողովրդի, որը հակված չէ քաղաքական որևէ հավակնության, կընձեռնվի իր սեփական կյանքով ապրելու և հայկական հողում հայ պաշտոնյաների կողմից ղեկավարվելու իրավունքը: Հայերը հասկացան, որ խաբվել են, որ իրենց իրավունքների ճանաչմանը չեն արժանացել, որովհետև եղել են խաղաղասեր և որ անկախ պահելով իրենց հին եկեղեցական կազմակերպությունը և ազգային ոգին, ըստ էության ոչնչի չեն հասել: Հայկական պատվիրակությունը տունդարձի ճանապարհին դեպի Արևելք կտանի այդ դասը: Բայց սույնով նա արտահայտում է այն կարծիքը, որ հայ ժողովուրդը երբեք չի դադարի ձայն բարձրացնել, քանի դեռ Եվրոպան չի բավարարել նրա պահանջները»²⁵:

²⁴ Գր. Արծրունի, Դուրք Ձեր պարտականութիւնը կատարեցիք, «Մշակ», 1878, թիվ 110, էջ 1:

²⁵ Քիչ այլ խմբագրությամբ 61-րդ հոդվածը տես Հայոց պատմություն, նշվ. հրատ., էջ 352:

²⁶ Մեջբերումն ըստ՝ Ստ. Պողոսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 192:

Սկսվում է ձեռք բերածի արժեքավորման գործընթացը: Ձևավորվում է երկու իրարամերժ մոտեցում: Առաջինը լավատեսականն էր, որը ներկայացնում էին Ներսես պատրիարքը, Բեռլինից վերադարձած Մինաս Չերազը և Խորեն Նար-Պեյը: Չերազը համարում էր, որ հայերը Բեռլինում շահել են և անհնար էր «աւելի շահել լեզուվ և գրչով»²⁶, իսկ շահածն էլ ոսկեհանք է, մեզ մնում է միայն «խիզախել եւ հանել ոսկին»²⁷:

Անդրադառնալով Մ. Չերազի «Թե ինչ շահեցանք Պէռլինի վեհաժողովէն» գրվածքին՝ Լեոն գրում է. «Այսօր Մինաս Չերազի բողոքը մի հուշարձան է քաղաքական անգրագիտության, համբակային միամտության և անուղղելի ռոմանտիզմի»²⁸:

Ելույթ ունենալով Ազգային ժողովում՝ Խորեն Նար-Պեյն ասում է. «Առաջին անգամ ըլլալով Հայուն անունը լոկ կրօնական կերպարանքէ մերկանալով՝ քաղաքական կերպարանք մը կ'առնու, եւ միջազգային մեծ դաշնագրի մը մէջ միջազգային խնդիր մը կը դառնայ Հայկական խնդիրը»²⁹:

Ավելի մեծ թիվ էին կազմում հոռետեսները: Նրանց կարծիքների մի մասն արտահայտվել է Բեռլինի վեհաժողովից անմիջապես հետո: Ղրանք են.

1. Ինչո՞ւ սկսեցինք, եթե չէինք շահելու:

2. Քիչ խնդրեցինք, քիչ տվեցին:

3. Հայկական հարց կոչվածը պատրիարքի հնարածն է, ազգն այստեղ մասնակցություն չունի: Այս տեսակետը, որպես իր հասցեին ուղղված մեղադրանք, բարձրաձայնել է պատրիարքը, ըստ որի, նա գործել է օտար ուժերի ազդեցությամբ և դարձել գործիք այդ ուժերի ձեռքին: Այս մեղադրանքը Ազգային ժողովը մերժում է անմիջապես:

4. Ներսես պատրիարքին մեղադրանքների մի ամբողջ շարք է ներկայացնում Ազգային ժողովի պատգամավոր Թադեոս Պեկյանը: Ղրանք են.

ա) Գաղտնի մի ձեռք, բարձրաստիճան հոգևորականության վստահությունը չարաշահելով, ազգային շարժումն օգտագործել է ի վնաս ազգի:

բ) Ազգային կամքը պետք է հայտնվեր Եվրոպային՝ օրինավոր և հանդիսավոր կերպով, որը չի կատարվել:

գ) Փոխանակ ազգային իսկական և անկեղծ կամքի, տարբեր կամք է հայտնվել Եվրոպային, իսկ Բեռլինի վեհաժողովին պաշտոնապես ոչ մի կամք չի ներկայացվել:

դ) Քաղաքական սխալներ թույլ տրվեցին՝ որդեգրելով մե՛րթ այս, մե՛րթ մյուս կողմնորոշումը, որով կորցրեցին հակառակ կողմերի վստահությունը և համակրություն³⁰:

Պատրիարքը, ըստ Պեկյանի, գործել է ինքնուրույնաբար և ոչ թե Ազգային ժողովի որոշմամբ: Ճիշտ է, 1876 թ. դեկտեմբերի 10-ին, Ազգային ժողովի թույլտվությամբ, պատրիարքը կարող էր ինքնուրույնաբար գործել, բայց քաղաքական հանգամանքները փոխվել էին, և նա պարտավոր էր փոխված հանգամանքներին համապատասխան գործելու արտոնություն ստանալ Ազգային ժողովից: Մինչդեռ պատրիարքը դա չի կատարել, արդյունքում ազգի

²⁶ Մ. Չերազ, Թե ինչ շահեցանք Պէռլինի վեհաժողովէն, Կ.Պօլիս, 1878, էջ 17:

²⁷ Նույն տեղում, էջ 30:

²⁸ Լեոն, Անցյալից, Եր., 2009, էջ 28:

²⁹ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1877-1879, 10-ը նոյեմբերի 1878, էջ 214:

³⁰ Նույն տեղում, 6 հոկտեմբերի 1878, էջ 161:

համար կայացվել է աննպաստ որոշում: Պատրիարքը և Ազգային ժողովը ամբողջությամբ մերժում են այս մեղադրանքները նույնպես:

Որոշ ժամանակ անց այս մեղադրանքներին ավելանում է ևս մեկը.

5. Բեռլինի վեհաժողովի նախօրեին թուրքական կառավարությունը մոլորեցրել է հայ պաշտոնյաներին, նրանք էլ՝ Ներսեսին: Որպես հետևանք՝ հայերը խաբվելով՝ իրենց դեմ են հանել և՛ թուրքերին, և՛ ռուսներին ու իրենց կամքից անկախ իրականացրել թուրքիայի կամքը (Ա. Չոպանյան):

Հաջորդ երկու մեղադրանքները հնչել են Եղեռնից հետո՝ դա որպես գնահատման հիմք ընդունելով:

6. Ներսեսը համարվել է «հայ անպետք դիվանագիտության» (Լեո) ներկայացուցիչ, ով իրականում «...հանդիսացաւ խակ ու անփորձ «փոլիթիքոս» մը, որուն դիւանագիտական մարզանքները աղետալի եղան մեր դատին համար: Անկկա յոյս դրաւ Անգլիոյ բարեացակամութեան վրայ,- կարդալով Կլատըսթոնի և այլ «հայասէրներու» կամ «մարդասէրներու» ճառերը եւ քաղաքական սխալ հունի մէջ դրաւ մեր դատին հետապնդման գործընթացը,- նմանելով մորթուելու դատապարտուաց ոչխարի մը, որ մսագործին մէջ կը տեսնէ զինք փրկող բարի հովիւը»³¹:

7. «Ոչ մէկ ատեն հայ գործիչներ ունեցած են անորակելի սայթաքումներ քաղաքական գետնի վրայ, որքան ունեցան Ներսէս Պատրիարք եւ իր գործակից «ինքնահաւան խելացիները» Խրիմեանի բառերով»³²: Եվ այդ սխալները «շատ սուղի նստաւ մեզի: Հայ ժողովուրդը այդ սխալին փրկագինը իր արիւնով եւ ֆիզիկական փճացումով վճարեց»³³:

Զխորանալով Ներսեսի՝ որպես ազգային գործիչ շուրջ եղած բանավեճերի մեջ, նշենք միայն, որ գնահատումների մեծ մասն արվել է հետին թվով, իսկ անդրադառնալով Մ.Խրիմյանի «ինքնահավան խելացիներ» արտահայտությանը, կարծում ենք, որ նա հոգուն մեղք է անում: Չէ՞ որ այդ «խելոքներից» մեկն էլ ինքն էր: Ինքն էր պահանջել գահընկեց անել Ներսեսին՝ պասիվ դիրքորոշման համար, ինքն էր Եվրոպայում բանակցություններ վարել, ինքն էր «երկաթե շերեփի» կոչ արել:

Գնահատականների մի մասը, որ տրվել է Եղեռնից հետո և գնահատվել՝ Եղեռնը որպես Հայկական հարցի միջազգայնացման հետևանք ընդունելով, ինչ-որ իմաստով նման է ուշացած մարգարեության: Կարծում ենք՝ Ներսեսը արդարացում չէր ունենա, եթե չառաջադրեր Հայոց հարցը, հատկապես, երբ նրան գործունեության էին մղում թուրքիան և Անգլիան՝ որոշակի խոստումներ տալով: Խոստումներ էին տալիս Ռուսաստանը, մյուս պետությունները, երբ նրան գործունեության էր մղում ողջ հայ ազգը, երբ անկախություն էին ստանում բախտակից ազգերը:

Տեսնենք, թե ինչպես է արդարանում ինքը՝ Ներսեսը: Ներկայացնենք 1878 հուլիսի 21-ին Ազգային ժողովում նրա հայտնի ելույթը: Այդ ելույթում Ներսեսը խոստովանում է, որ ինքը տեսնում էր, թե ինչպես է պատերազմի ընթացքում և դրանից հետո վատանում ժողովրդի վիճակը, և եթե ազդու միջոցներ չձեռնարկվեին, ապա առաջանալու էր ազգի լինել-չլինելու խնդիրը: «Ներելո՞ւ էիք ինձ,- հարցնում է Ներսեսը,- եթե անգործ նստեի, երբ թուրքիայում ապրող քրիստոնյաների բախտն էր որոշվում, ներելո՞ւ էին ինձ

³¹ **Գ. Ահարոնեան**, Մեծ երազի ճամբոյն վրայ, նշվ. հրատ., էջ 35-36:

³² **Մ. Սերոբեան**, Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ, 1948, էջ 145:

³³ Նույն տեղում, էջ 205:

մեր նախնիների ոգիները՝ Հայկից մինչև Լևոն Լուսինյանը, մեր բոլոր կաթողիկոսները: Ես պատասխանատվություն զգացի նախնյաց հոգիների ու հիշատակների առջև, այն հայ սերունդների առջև, ովքեր հաջորդելու են մեզ: Կներե՞ր ինձ ժողովուրդը: Ինքս ինձ չէի ների, եթե հայ ժողովրդի աղաղակը Եվրոպա չհասցնեի, եթե Եվրոպային տեղյակ չպահեի, որ Արևելքում հայ ազգ էլ կա»: Իսկապես, իրավունք ունե՞ր Ներսես պատրիարքը լռելու և չգործելու: Չէ՞ որ երբ լռել է, ժողովրդի համակրանքից է զրկվել, գահազրկման վտանգին է ենթարկվել: Ներսեսն իրավացի էր՝ կարծելով, թե ոչ ոք չի կարող դեմ դուրս գալ բուռն գործությանը, երբ ունեցածը միայն բարոյական գործություն է, չի կարող փոխել իրադարձությունների ընթացքը: Ներսեսի կարծիքով՝ նույնիսկ 61-րդ հոդվածի պայմաններում շահել ենք, որովհետև.

«ա) Առաջին անգամ հայոց ազգի անունն անցավ հանդիսավոր դաշնագրության մեջ:

բ) Հայոց ապագայի սերմունքը դրվեց:

գ) Եվրոպացիք ճանաչեցին և սիրեցին հայ ազգը, ու այս պահիս, երբ ես ձեզ հետ խոսում եմ, զուցե մեծ բեմերում եվրոպական կառավարությունները հարցուններ են կատարում Հայոց հարցի վերաբերմամբ»:

Դարձյալ իրավացի էր Ներսեսը՝ նշելով, որ այսպիսի գործեր ո՛չ մեկ օրում, ո՛չ էլ մեկ մարդու ձեռքերով են կատարվում: Անհրաժեշտ է պատրաստվել ապագային, դրա համար անհրաժեշտ է, որ չմնանք այստեղ, այլ Հայաստան գնանք: Հայաստան պետք է ուղարկել մեր բանիբուն, տաղանդավոր, ազգասեր, ուսումնասեր եկեղեցականներին, դաստիարակներին, ուսուցիչներին, երիտասարդներին, արվեստագետներին: Հայաստան պետք է գնան մեր առևտրականները, պանդուխտները, «...ոչ եւս պիտի ըլլա հոն սով, սրածութիւն, ոչ եւս հարստահարութիւն... ուղիներ պիտի բացուին, ջրանցքներ պիտի շինուին. գործարաններ պիտի կառուցուին, Անգլիոյ դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու, թող երթան մեր դրամատէրք ալ, ընկերութիւններ կազմեն այս օրուրնէ, ընկերութիւններ ամէն քաղաք ու գիւղ դպրոցներ հաստատելու համար. ընկերութիւններ առևտրական յարաբերութիւններ հաստատելու համար... Հնդկաստանէն, Հայաստանէն, Անգլիայէն, Թուրքիայէն, Ռուսաստանէն ու Աւստրիայէն մինչև Պարսկաստանէն միանան, ձեռք ձեռքի տան բոլոր Հայերը...»³⁴: Դժվար է ավելի գեղեցիկ ու պատկերավոր ներկայացնել:

Ո՞րն էր ամենամեծ դասը, որ քաղեցին ժամանակի հայ մտավորականները Սան Ստեֆանոյից մինչև Բեռլին ընկած փորձություններից:

Դա ամենից լավ ձևակերպում է Գարեգին Սրվանձտյանը. «Հայաստանի մեջն է բուն հայկական խնդիրը և մենք Պէռլինի մեջ կ'որոնենք զայն...»: Զարգացնելով Գարեգին Սրվանձտյանի միտքը՝ Գրիգոր Արծրունին «Մշակում» գրում է. «Մեզ վրա պետք է հոյս դնենք, եւ ոչ թէ Բեռլինի: Այն ազգը, որն ինքն իր վրա հոյս չունի, նա ապագայ չունի»³⁵:

Իսկ ի՞նչ անել:

³⁴ Ս.Պատրիարք Հօր ատենախօսութիւնը, «Մշակ», 1878, թիվ 159, էջ 2, ինչպես նաև՝ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1877-1879, 21-ը յուլիսի 1878, էջ 61-62:

³⁵ «Մշակ», 1879, թիվ 125, էջ 1:

Ձևավորվում է երկու մոտեցում: Առաջինը ներկայացնում է Ներսես պատրիարքը, հետագայում՝ հայ ազգային պահպանողական մտավորականությունը, որի էությունը հետևյալն է.

- ա) ազգի տնտեսական վիճակի բարվոքում (տնտեսական առաջադիմություն),
- բ) մտավոր և բարոյական առաջադիմություն (լուսավորության տարածում),
- գ) հայությանը մայր հայրենիքում պահել (զաղթականության վերացում),
- դ) ազգի քաղաքական ապագայի ապահովում:

Ազգի քաղաքական ապագայի ապահովման տեսլականը, ըստ այս մոտեցման կողմնակիցների, մտավորապես հետևյալն է. հայը պետք է պահպանի իր պարզ կյանքը, զարգանա մտավորապես ու բարոյապես, ապահովվի նյութապես, դառնա կարևոր տարր, ձեռք բերի տիրապետող ազգին հավասար քաղաքական իրավունքներ: Ժամանակն իր հաշիվը կտեսնի, հայը մտավոր կարողությունների շնորհիվ Տաճկաստանում կդառնա երկրորդ կարևոր տարրը տաճիկներից հետո, որոնք լրացնելու են միմյանց, կազմելու Տաճկահայկական քաղաքական մարմին³⁶: Նրանք կտրականապես դեմ էին հեղափոխական ապստամբական ելույթներին, որովհետև «անզեն, անկիրթ և անհաց, համեմատաբար թուվ շատ նուազ ժողովրդի կողմից բուռն ցոյցեր անելը լավ գինաւորված, զօրեղ տէրութեան եւ ազգի դէմ, իւր գլխին թշուառութեան դատակնիք հրաւիրել է»³⁷:

Երկրորդ մոտեցումը հայերին պարտադրեցին եվրոպական տերությունները: Նրանք ազատություն և անկախություն տվեցին բոլոր այն ազգերին, որոնք ապստամբել էին, իսկ հայերը, Իզմատի բնութագրմամբ՝ «դարձած են մեռեալ տարերք»: Հայերը հասկացան, որ պետք է պայքարել, դուրս գալ թրքական բռնակալության դեմ, արյուն թափելով ստիպել եվրոպական տերություններին՝ ընդունելու իրենց դատը, հաշվի առնել հայության պահանջները:

Գնահատելով բեռլինյան հուսախաբության պատճառները՝ Մ.Վարանդյանը այն տեսակետն է հայտնում, թե չարիքի արմատը հայկական դիվանագիտության այս կամ այն ձևի ու վրիպումի մեջ չէր, այլ բուն այդ դիվանագիտության էության մեջ: Սխալն այն էր, որ հայությունն իր դատը առաջ քաշելու համար դիմել էր միայն դիվանագիտական միջոցների: Չկար այնտեղ և «նոյնիսկ արհամարհած էր ամենաէականը,- ժողովրդի պատրաստութիւնը, նրա իրական-դիմադրական ուժը: Չկար «երկաթ շերեփը», որի բացակայութիւնը այդքան դառնօրէն ողբում էր Խրիմեան Հայրիկ, իր վերադարձին Բեռլինից...»³⁸:

Իհարկե, մինչև Սան Ստեֆանոն ու Բեռլինը, Մ. Նալբանդյանը, Ռաֆֆին, Մ. Մամուրյանը, Գր. Արծրունին արդեն այն համոզմանն էին, որ գենքով պետք է պաշտպանենք մեր շահերը, օտարը մեզ համար մեկ քայլ էլ չի անի, եթե նրան չստիպենք: Մ. Մամուրյանը գրում է. «Յուսալ որ օտար ազգ մը Յիսուսի ըրած իրաշքը պիտի գործէ ըսելով՝ անկեալ եւ հէք ժողովրդեան մը, - Արի, ել... ցնորք է: Սպասել, որ արտաքին փրկիչներ գան և հայ ժողովրդեան սեւ պատանքը քակեն՝ յիմարութիւն է: Հէք եւ ստրուկ ժողովրդեան մը՝

³⁶ Թիֆլիս, 17-ը յուլիսի, «Մեղու Հայաստանի», 1876, թիվ 27, էջ 1:

³⁷ Ազգային, «Մեղու Հայաստանի», 1878, թիվ 5, էջ 2:

³⁸ Մ.Վարանդեան, Հայկական շարժման նախապատմութիւն, հ. 2, ժընեւ, 1913, էջ 151:

առաջին եւ միակ ազատարարն ինքն է...»³⁹: Բեռլինից հետո Ռաֆֆուն, Արծրունուն, Մամուրյանին է միանում նաև Խրիմյան Հայրիկը: Ռաֆֆին գրում է. «Ոչ ոք իր հոր հոգու համար մեզ չի օգնիլ»⁴⁰, որովհետև «...ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրանց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի՝ փրկություն»⁴¹: Դարձյալ Մ.Մամուրյանն է գրում. «Եթե հայերն իրապես չգործեն, արիւն չթափեն, չեն կրնար ապրիլ քաղաքականապես»⁴²: Բեռլինից վերադարձած Խրիմյան Հայրիկը իր քարոզներում բացահայտ ապստամբության կոչ է անում: Օրթոգյուղի և Գումգամիուի եկեղեցիներում Խրիմյանը ժողովրդին ասում է. «Հայաստանցիներ, այսուհետև սիրեցէք երկաթը: Ձեր փրկութիւնը երկաթով կը լինի...Ձէնք գործածել սկսեցէք... Այսուհետև երբ Տրապիզոնի լեռներէն անցնելով դէպի ձեր հայրենիք երթաք, փոխանակ անտառներէն մի փայտ կտրելով ձեր ձեռքին առնելու, մի հրացան ունեցէք ձեր ձեռքը... Անիծեալ կը լինի այն որ այդպէս չի վարուիր»⁴³: Եվրոպական տերությունները ստիպեցին հայերին բռնել հեղափոխական-ապստամբական պայքարի ուղին: Ազգային-քաղաքական ռոմանտիզմը դարձավ իշխող: Ձենքով հարցը լուծելու կողմնակիցների կարծիքով՝ հայերի պայքարը պետք է դառնա վերք Եվրոպայի մարմնին, որը Եվրոպային ստիպի հարցը լուծելու համար դիմել վիրաբուժական միջոցների:

Խաղաղ, աստիճանական փոփոխությունների միջոցով հարցերը լուծելու, քաղաքական չափավորությունը, իրատեսությունը, իրերի փաստացի վիճակը սթափ գնահատելու կոչերն անտեսվեցին, կոչ անողները քննադատվեցին և համարվեցին թրքասերներ:

Այսպես է ծնվում հողը արյունով նվաճելու գաղափարախոսությունը: 19-րդ դարի 90-ական թվականներին՝ ազգային կուսակցությունների ստեղծումից հետո, սկսվում է այդ գաղափարախոսության իրագործումը: Քաղաքական կուսակցությունները, ֆիդայական խմբերը, արևմտահայության մի մասը դուրս եկան մահու և կենաց պայքարի թրքական բռնակալության դեմ՝

Միջանկյալ տեսակետ է ներկայացնում Ա.Զոպանյանը: Նրա կարծիքով՝ հայն անշուշտ չպետք է մնա ստրկական վիճակի մեջ, բայց կարող է սպասել, պատրաստվել, կազմակերպվել և, քաղաքական հարմար պահը ընտրելով, հանդես գալ իր ազատության համար, որովհետև «...նշուած ժողովուրդներուն դատը կը լուծուի երկու պայմանով: Նախ՝ երբ այդ դատը որոշապէս զծուած է... երկրորդ, երբ այդ ժողովուրդը իր դատը շահելու համար, չէ թէ մարտիրոսի արիւնը, այլ հերոսի արիւնը կը թափէ ցուցնելու, թէ տէրն է այն հողին ուր ազատ ապրիլ կ'ուզէ»⁴⁴:

³⁹ «Արեւելեան մամուլ», 1876, թիվ 1, էջ 5:

⁴⁰ Ռաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 5, Եր., 1985, էջ 574:

⁴¹ Ռաֆֆի, Դատարկ հույսերով ենք խաբվում, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 11, Եր., 1991, էջ 10:

⁴² Մ. Մամուրեան, Թղթակցութիւն, «Արեւելեան մամուլ», 1878, թիվ 5, էջ 36:

⁴³ Նամակ Թիւրքիայից, «Մշակ», 1878, թիվ 159, էջ 31:

* Հետագայում այս մոտեցման էական շտկումներ է կատարում Գարեգին Նժդեհը: Նրա կարծիքով՝ մեր ձայնողունների հիմնական պատճառը կրավորական կեցվածքն է, քաղաքական մուրացկանությունը: Մինչև չազատվենք հոտային հոգեբանությունից, ոտքի չկանգնենք, սակայն ոչ թե արտաքին դրդումներով, օտարի ցանկությամբ, այլ մեր սեփական բնական մղումով, մինչև չառաջնորդվենք «վճռական մենակի» հոգեբանությամբ, չենք փրկվի:

⁴⁴ Ա. Զոպանյան, Ներկան, «Անահիտ», 1899, թիվ 7, էջ 226:

Բեռլինից դասեր քաղեցին նաև թուրքերը: Եթե բարենորոգումների հիմքում հայերի թվական գերազանցության փաստն է, ապա կարելի է այդ թիվն այնքան նվազեցնել, որ բարեփոխումների անհրաժեշտություն այլևս չզգացվի: Այս խնդիրը լուծելու համար հետագա տասնամյակների ընթացքում թուրքերն անցան ֆիզիկական բռնությունների, կոտորածների միջոցով հայկական տարրի նվազեցման քաղաքականության, իսկ երիտթուրքերը՝ ֆիզիկական բնաջնջման (չկա հայություն, չկա Հայկական հարց): Եվ քանի որ 61-րդ հոդվածը ձևակերպողներից մեկը Անգլիայի ներկայացուցիչն էր, այդ պատճառով էլ հետագայում Լյոյդ Ջորջը խոստովանում է. «Եթե չլիներ մեր չարաբաստիկ միջամտությունը, ապա հայերի մեծամասնությունը տակավին 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով կանցներ ռուսական դրոշի պաշտպանության տակ... Հայաստանը զոհաբերվեց մեր կողմից կերտված հաղթանակի զոհասեղանին... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 և 1909 թվականների սարսափելի սպանդներին և 1915 թվականի գարհուրելի կոտորածներին... Հենց մենք թուրքերին հնարավորություն տվեցինք իրագործելու այդ ոճրագործությունը»⁴⁵:

Հայ ժողովրդի անմեղ արյունը թափվեց միջազգային դիվանագիտության զոհասեղանին և ծանրացած է եվրոպական տերությունների խղճին:

⁴⁵ Джордж Л., Правда о мирных договорах, т. 2., М., 1957, с. 390.

АРАМ САРКИСЯН

*Заведующий кафедрой
„Философии и истории армянского народа“ АГЭУ,
доктор философских наук, профессор*

Возникновение, интернационализация Армянского вопроса, уроки и последствия.– Причиной возникновения Армянского вопроса стала потеря независимости Отчизны и Киликии. Вопрос интерпретировался как восстановление национальной государственности в границах исторической родины.

С 1870 года под Армянским вопросом понималось решение насущных задач западных армян Османской империи с помощью европейских держав и дипломатии. Главным поборником решения вопроса был константинопольский патриархат, патриархами которого были Мкртич Хримян (Хримян Айрик) и Нерсес Варжапетян.

До русско-турецкой войны 1877-1878 гг. Армянский вопрос и армянами, и турками рассматривался как внутреннее дело Османской Турции, а после войны, а именно во время Берлинского конгресса и после него – стал международным.

Первым уроком после неудачи берлинского конгресса для армян стала убежденность в том, что без борьбы, без пролития крови невозможно добиться независимости. А для турок стало ясно, что „лучшим“ решением Армянского вопроса является физическое истребление народа, тысячами проживающего на исторической родине.

Результатом столкновения армян с варварством турок стал геноцид армян в 1915 году.

ARAM SARGSYAN

*Head of the Chair of
„Philosophy and Armenian History“ at ASUE,
Doctor in Philosophical Sciences, Professor*

The Origin, Internationalization of the Armenian Question, Lessons and Consequences.– The reason giving birth to the Armenian question was the loss of independence in the homeland and in Kilikya, as a state system reconstruction in the boundaries of historical homeland.

Beginning with 1870 the Armenian question became the solution to the problem of Western Armenians with the help of mediation of European diplomacy and influence. During that period the question was raised by the patriarchate's order of Konstandnupolise especially by patriarches M. Khrimyan and N. Varzhapetyan.

From 1877 up to 1878 the Russian-Turkish war, and after the Berlin conference the Armenian question became international.

After the Berlin conference it was clear for Armenians that it was impossible to win independence without struggle and blood, it was clear for the Turks that «the best» solution to the Armenian question was the Armenians' annihilation, who lived in their homeland during the millenium. The result was the Armenian genocide in 1915.

